

Անսովոր համանվագ՝ սովորական գույներով



Տարիներ առաջ՝ 1989-ին, Երևանի Արդի արվեստի թանգարանում կազմակերպված «Երկնագույն բուրգ» կոչվող խմբի ցուցահանդեսի այցելուները թերևս առաջին անգամ հնարավորություն ունեցան ծանոթանալու Հրանտ Միրզոյանի ստեղծագործություններին, որոնք ցուցադրվում էին առանձին սրահում: Դրան հաջորդած հանրապետական ցուցահանդեսներում գրեթե միշտ կարելի էր հանդիպել այս ստորագրությամբ նկարների, որոնք միանգամից առանձնանում էին մյուսներից՝ նախևառաջ իրենց գեղագիտական անշփոթելի մտածողությամբ:

Հիմնականում վերացապաշտ նկարչության սկզբունքներով արված այդ կտավները թվում է, թե տարբերակիչ քիչ առանձնահատկություններ պիտի երևան հանեին նմանօրինակ մյուս աշխատանքների համեմատությամբ: Զարմանալին և դժվար բացատրելին էլ հենց այն է, որ նույն, քեզ հազարապատիկ ծանոթ գույները՝ կարմիրը, դեղինը, գմբուխտ կանաչը, դրվելով կողք կողքի, կազմում են անձև ինչ-որ ձև և արդյունքում ի հայտ բերում գեղարվեստական տպավորիչ որակ: Դիտելով այդ աշխատանքները՝ մեկ անգամ ևս համոզվում ես այն հանրահայտ ճշմարտության մեջ, թե գլխավորն ու էականը, ի վերջո, ձևը չէ, այլ դրա արտահայտած բովանդակությունը, պարունակյալ իմաստը:



Աբստրակտ կամ վերացապաշտ կոչվող նկարչությունն առաջին հայացքից ոչ ազգային կարող է թվալ, չասելու համար՝ ապագային: Տվյալ դեպքում, սակայն, մտքովդ անգամ չի անցնի Հրանտ Միրզոյանի նկարներում օտար կամ ոչ հայկական շեշտեր փնտրել: Դրանք զուտ հայի ներաշխարհի վերացարկումներ են՝ շեշտված գունային վառ մտածողությամբ ու կատարման ձևերի բազմազանությամբ: Վերջիններս,

անշուշտ, միանգամից չեն տրվել նկարչին: Դրանք նրա երկար որոնումների և տքնանքի օրինաչափ արդյունքն են:

Հրանտը ծնվել է 1962թ. Գյումրիում՝ նկարչի ընտանիքում: Սկզբում սովորել է տեղի Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոցում, ապա ուսումը շարունակել Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանում և Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարի բաժնում (Մարգիս Մուրադյանի արվեստանոց): Ցուցահանդեսների սկսել է մասնակցել դեռևս ուսումնարանում սովորելու տարիներին: Խմբակային ցուցահանդեսներում նրա ստեղծագործությունները ցուցադրվել են եվրոպական մի շարք երկրներում, ԱՄՆ-ում և Կանադայում:

Թեման Հրանտի համար լոկ միջոց է գեղանկարչական խնդիրներ լուծելու ճանապարհին: Այդ մասին խոստովանում է ինքը՝ հեղինակը. «Ինձ համար թեման այնքան էլ կարևոր չէ: Նկարներս ստեղծվում են կախված զգացմունքային տրամադրությունից»: Հիմնական խնդիրը, որ հուզում է նրան, գույների և լույսուստվերի միջոցով առավելագույն արտահայտչականության հասնելն է: Ստեղծագործում է շարքերով՝ «Արվեստանոց», «Տեսիլքներ», «Մեղեդի», «Հայտնություն» և այլն:

Մեծ թիվ են կազմում կոմպոզիցիոն աշխատանքները, որոնց միջոցով հեղինակն արտահայտում է իր ներքին զգացողությունը, իրեն համակած ապրումներն ու տրամադրությունները: Կախված դրանցից՝ փոխվում է գործերի տոնայնությունը, ուստի և գունային երանգապնակը: Մերթ դեղինն է գերիշխում, երբ «Գարուն» է պատկերված, մերթ մուգ երանգները՝ «Գիշեր»ային պատկերների դեպքում: Իսկ երբ խառն են զգացումները, գույները ևս հերթազայում են միմյանց՝ կարծես ալիք տալով կտավի մակերեսին («Փոփոխական պատկեր»):



Ջուտ արստրակտ գործերի կողքին քիչ չեն, եթե կարելի է այսպես անվանել, ֆիգուրատիվ արստրակցիային վերաբերող աշխատանքները: Դրանցում պարզորոշ տեսնում ենք ֆիգուրներ, զանազանում դեմքեր, որոնք թերևս չունեն առարկայական կոնկրետություն, բայց ամենակարևորը՝ ունեն հայացք, քեզ փոխանցվող տրամադրություն: Այսպես է, օրինակ, «Մպասում» կտավը դիտելիս, երբ հայացքիդ առջև այդ հոգեվիճակը կրող մտախոհ կինն է՝ աղավնին ձեռքին:

Գեղարվեստական նույն սկզբունքներով է հատկորոշվում նաև Հրանտ Միրզոյանի գրաֆիկան: Հիմնականում ստեղծագործում է խառը տեխնիկայով՝ հավասարապես օգտագործելով ջրաներկ և գուաշ, պաստել և տեմպերա, թանաք ու տուշ: Արդյունքում ստեղծվում է գունազծային մի անսովոր համանվագ, որն անկրկնելի է իր բազմազան դրսևորումներով:



Այսպես է, օրինակ, գրաֆիկական թերթերի այն շարքը, որում Պրահայի քաղաքային բնապատկերներն են: Դրանք 2003թ. ցուցադրվեցին Չեխիայի մայրաքաղաքի «Րափիդ» պատկերասրահում և մեծ հաջողություն ունեցան: Արտաքին բնորոշ մանրամասների խորքի վրա՝ աշտարակներ, ճարտարապետական բազմաձև կառույցներ և այլն, նկարչի երևակայության պատկերներն են՝ միջնադարյան ասպետներ, պարահանդեսային արդուզարդով զուգված տիկնայք և այլն: Դրանք տպավորում են և տրամադրություն ստեղծում, ու դարձյալ դրանով պայմանավորված՝ մերթ վառ գույների խրախճանքի ենք հանդիպում, մերթ դրանց նուրբ զուգորդումների:



2007թ. Հրանտը հրավիրվեց Ալմա Աթի՝ որմնանկարելու տեղի հայկական եկեղեցին: Այդտեղ էլ «Արվեստ» պատկերասրահում, բացվեց նրա հերթական անհատական ցուցահանդեսը: Վերջին տարիներին նրա աշխատանքները հաջողությամբ ցուցադրվում են Բոսալիայում՝ Նեապոլում և Ֆլորենցիայում, նաև Ֆրանսիայի Լիոն քաղաքում: Նշանակալից էր նրա մասնակցությունը Մոսկվայի «Տապան» թանգարանում 2016-ին կազմակերպված «Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի. սերունդների հերթափոխ» ցուցահանդեսին:

Չմոռանանք ավելացնել, որ Հրանտ Միրզոյանը փնտրված նկարիչ է նաև մասնավոր կոլեկցիոներների շրջանում:

Լևոն Լաճիկյան